ԶԵԿՈՒՅՑ

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման նոր համակարգի ներդնման և գործարկման մասին

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման համակարգի ներդնումը և գործարկումը ուղեկցվեց բազմաթիվ սխալներով, բացթողումներով, ինչպես նաև կազմակերպչական խնդիրներով: Հասկանալու համար թե ինչ սխալների և խնդիրների մասին է խոսքը, պետք է առանձնացնել համակարգը աշխատեցնող յուրաքանչյուր դերակատարի գործառույթը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021թ ապրիլի 1-ին ընդունում է N 466 Ն որոշումը, համաձայն որի 17-րդ կետի վերապատրաստող կազմակերպությունը պայմանագիր է կնքում ուսուցչի և դպրոցի հետ, այսինքն՝ պայմանագիրը լինում է եռակողմ, ինչը ոչ միայն խոսքով, այլև իրավական տեսանկյունից նույնպես հաստատում է ուսուցչի կողմից վերապատրաստող կազմակերպությանը ընտրելու իրավունքը:

Սակայն այնուհետև կառավարությունը, 2021թ. հուլիսի 22-ին ընդունում է N 1187-Ն որոշումը, համաձայն որի որոշում է, որ ուսուցչին պետք է դուրս թողնել եռակողմ պայմանագրից. պայմանագիրը պետք է կնքեն միայն դպրոցը և վերապատրաստող կազմակերպությունը: Ոչ մի հիմնավոր պատճառ, բացատրություն չհրապարակվեց, թե ինչու կայացրեցին նման որոշում: Փաստացի ստացվեց, որ կառավարությունը ուսուցչի կողմից վերապատրաստող կազմակերպությանը իր ցանկությամբ ընտրելու իրավական հիմքը վերացրեց: Իսկ N 466-Ն որոշման 15-րդ կետի, որն է՝ (Ուսումնական հաստատությունը, հիմնվելով ուսուցիչների կարծիքների ու առաջարկությունների վրա, վերապատրաստող կազմակերպությունների և դասընթացների հրապարակված ցանկից ընտրում է վերապատրաստող կազմակերպության և (կամ) դասընթաց), գործնական կիրառությունը մնաց ուսուցիչ-տնօրեն անձնական փոխհարաբերությունների տիրույթում: Դա էր պատճառը, որ 40-ից ավելի ուսուցիչներ, ովքեր դիմել էին մեր

կազմակերպությունում ՏՀՏ կիրառումը ուսումնական գործընթացում բաղադրիչով վերապատրաստվելու համար, երբ գնացել էին իրենց դպրոցներ համապատասխան դիմումները լրացնելու, պարզել էին, որ դպրոցի տնօրենները արդեն ընտրել և կնքել են պայմանագրեր այլ կազմակերպությունների հետ կամ եթե դեռևս չէին էլ կնքել պայմանագրերը, միևնույնն է ուսուցչին կանգնեցրել են փաստի առջև: Կային բազմաթիվ ուսուցիչներ, ովքեր վախեցան նույնիսկ նշել այն կազմակերպությունների անունները, որոնց հետ իրենց դպրոցի տնօրենները առանց իրենց տեղեկացնելու պայմանավորվածություններ են ձեռք բերել:

ԿԳՄՍ նախարարության աշխատակիցները ամենասկզբից շեշտում էին, որ ուսուցիչները ազատ են ընտրելու վերապատրաստող կազմակերպությանը կամ կազմակերպություններին, ըստ բաղադրիչների, և որ ուսուցչին կողմնորոշող միակ գործոնը երաշխավորված կազմակերպությունների կողմից վերապատրաստումների համար նախատեսված դասընթացների մոդուլի, այսինքն՝ բովանդակության, կառուցվածքի հետ ծանոթացումն է: Սակայն ինչպես ստացվեց իրականում: Մի շարք կազմակերպություններ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ մայիսի 18-ի ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների և դասընթացների ցանկը հաստատելու մասին հրամանից անմիջապես հետո սկսեցին ֆեյսբուքյան իրենց էջերում հայտարարություններ հրապարակել ուսուցիչների հավաքագրման համար, նույնիսկ կային կազմակերպություններ, որոնք այցելում էին Երևանի և մարզերի դպրոցներ և զբաղվում իրենց կազմակերպությունների գովազդով, այն դեպքում, երբ դեռևս դասընթացների բովանդակության և կառուցվածքի մասին նույնիսկ հայտեր չկային կազմակերպությունների կողմից ԿԶՆԱԿ հիմնադրամին, որպեսզի վերջինս ուսումնասիրեր և ուղարկեր նախարարի հաստատմանը դասընթացների համապատասխան մոդուլները: Այդ դեպքում հարց է առաջանում, ի՞նչ էին գովազդում այդ կազմակերպությունները, որի հիման վրա էլ ուսուցիչը պետք է որոշում կայացներ, թե որ կազմակերպության կողմից առաջարկված դասընթացն է իր մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ: Արդյո՞ք ԿԳՄՍ նախարարության աշխատակիցները չէին տեսնում, թե ինչ է տեղի ունենում: Իհարկե տեսնում էին, քանի որ այդ մասին 2021թ. հունիսի 8-ին երաշխավորված կազմակերպությունների ներկայացուցիչների և ԿԳՄՍ նախարարության աշխատակիցների հանդիպման ժամանակ հպանցիկ անդրադարձան, թե՛ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը և թե՛ ԿԶՆԱԿ հիմնադրամի տնօրեն Արտաշես Թորոսյանը, սակայն կանխարգելիչ, վերահսկող գործողություններ այդպես էլ չիրականացվեց: Ստացվում է, որ վերապատրաստող կազմակերպությունների վարքագիծը հստակ կարգավորող մեխանիզմ էր անհրաժեշտ, որպեսզի պետական մարմինների կողմից ներդրված

ընթացակարգերի թերություններից, բացերից օգտվողներ չլինեին, հետևաբար չառաջանար նաև անարդար, անհավասար միջավայր, դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ինչը, վերոնշյալ պետական մարմինների կողմից, պարզապես չարվեց:

ԿԳՄՍ նախարարության և ԿԶՆԱԿ հիմնադրամի աշխատակիցները բազմիցս տարբեր առիթներով նշում են, որ անհրաժեշտ են բարեփոխումներ, որի համար կրթական ոլորտում ներդրվում են նոր մոտեցումներով, ձևաչափերով ծրագրեր, նախագծեր, համակարգեր, այդ դեպքում կրկին հարց է առաջանում, ինչու՞ չեն ներդրվում այդ ամենը իրապես իրագործելու համար վերահսկողական ռեալ մեխանիզմներ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև կարգազանցին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմ:

Նշենք, որ ԿԳՄՍ նախարարությունից վերապատրաստող կազմակերպությունների և դպրոցների միջև կնքվելիք պայմանագրի օրինակելի ձևը, կից փաստաթղթերը, որտեղ կարելի է գտնել գործընթացին վերաբերվող իրավական, ֆինանսական տեղեկատվությունը, վերապատրաստող կազմակերպություններին ուղարկվել է 2021թ. օգոստոսի 6-ին, այսինքն՝ ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների և դասընթացների ցանկը հաստատելու մասին նախարարի հրամանից գրեթե 3 ամիս հետո: Կազմակերպությունները ԿԳՄՍ նախարարության կողմից չստացան նաև բացատրություն, թե ինչպե՞ս է հաշվարկվել վերապատրաստումների համար հատկացված գումարի չափը, ի՞նչ հիմնավորմամբ է որոշվել, որ հատկացված գումարի չափը բավարար է իրապես արդյունավետ վերապատրաստումներ կազմակերպելու համար:

Ի դեպ, հերթական ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների և դասընթացների ցանկում ընդգրկվելու վերաբերյալ հայտարարված մրցույթում ԿԳՄՍ նախարարությունը հարկ չէր համարել նշելու վերապատրաստումների համար նախատեսված գոնե մոտավոր ֆինանսավորման չափը, որպեսզի դիմելուց առաջ կազմակերպությունները հաշվարկեին՝ կարող են մինիմալ ծախսերը հոգալ առաջարկված գումարով, թե ոչ: ԿԳՄՍ նախարարի «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման ֆինանսավորման նորմատիվները հաստատելու մասին» N 46 հրամանը եղել է մրցույթը հայտարարելուց 4 ամիս անց 2021թ. հուլիսի 2-ին: Ըստ այդ նորմատիվների, 92-110 ժամ առկա դասընթացների դեպքում յուրաքանչյուր վերապատրաստվող ուսուցչի

համար առավելագույնը նախատեսված է 24.000 դրամ, իսկ հեռավար դասընթացների դեպքում, նույն ժամաքանակի համար՝ 20.800 դրամ, իսկ գումարի բաշխումը, ըստ բաղադրիչների, կատարվում է դասաժամերի տոկոսային հարաբերակցությամբ:

Եթե բաժանում ենք ըստ բաղադրիչների,

1. «Մասնագիտական զարգացում» (81 ժամ)

    առկա 17.673, հեռավար 15,309

2. «ՏՀՏ կրառումը ուսումնական գործընթացում» (20 ժամ)

    առկա 4364, հեռավար 3780

3. «Հանրակրթության բնագավառի օրենսդրություն» (9 ժամ)

    առկա 1964, հեռավար 1701

Ստացվում է՝ այն կազմակերպությունները, որոնք չեն օգտվել ԿԳՄՍ նախարարության կողմից տվյալ նախագծում վերահսկողական նորմերի բացակայությունից և մինչև մոդուլների հաստատումը սկսել հավաքել պարտադիր ատեստավորման ենթակա հարյուրավոր ուսուցիչներից խմբեր, այլ գործել են ընթացակարգի էությանը համապատասխան, հայտնվել են անբարենպաստ պայմաններում, քանի որ մինչև մի քանի հոգուց կազմված ուսուցիչների խմբի հետ դասընթաց անցկացնելը կազմակերպության համար դառնում է անհնար, որովհետև կազմակերպությունը նախատեսված գումարով չի կարողանալու իրականացնել իր հարկային պարտավորությունները, ինչպես նաև վճարելու վերապատրաստողների՝ գոնե օրենքով սահմանված չափով մինիմալ ժամավճարները: Այս դեպքում, նույնիսկ խոսել բանիմաց և պրոֆեսիոնալ վերապատրաստողներին, ըստ արժանվույն վարձատրելու մասին, անիմաստ է: Արդյունքում ակնկալել, որ ստեղծված պայմաններում, երբ կազմակերպությունները պետք է աշխատեն, առաջին հերթին, անհրաժեշտ քանակ ապահովելու վրա, միևնույն ժամանակ խմբերում ընդգրկեն նվազագույնը 4 տասնյակից ավելի ուսուցիչների, որը ըստ բաղադրիչների, վերապատրաստողների համար կհանգեցնի խիստ ծանրաբեռնվածության, հետևաբար անհատական մոտեցման իսպառ բացակայության, պատկերացնել որակյալ, բարձր արդյունավետությամբ վերապատրաստումներ, գործնականում անհնար է: Կազմակերպությունները, որոնց դիմում են ընդամենը մի քանի ուսուցիչներ վերապատրաստվելու, ստիպված կլինեն հրաժարվել այդ ուսուցիչների համար դասընթացների անցկացումից, որի արդյունքում էլ այդ

ուսուցիչները, պարտադիր ատեստացիայից դուրս չմնալու համար, ստիպված կլինեն միանալու այն մի քանի կազմակերպությունների մեծաքանակ խմբերին: Այն նույն կազմակերպություններին, որոնք օգտվելով նախագծի բացերից, կիրառեցին իրենց մեծ, թե ֆինանսական և թե համակարգային ռեսուրսները և պայմանավորվածություններ ձեռք բերեցին դպրոցների տնօրենների հետ:

Հաջորդ խնդիրը, որին մենք ականատես եղանք, դա, թե ուսուցիչների և թե տնօրենների, պարտադիր ատեստավորման այս նոր համակարգի վերաբերյալ, իրազեկվածության բացակայությունն էր: Չնայած ԿԳՄՍ նախարարության աշխատակիցները նշում էին, որ դպրոցներին 2 անգամ ուղարկել են շրջաբերական, որում եղել են վերապատրաստումներին առնչվող փաստաթղթերը և ուղեցույցները, սակայն մեր փորձը ցույց տվեց հակառակը: Ուսուցչի դիմումի հիման վրա մեր կազմակերպությանը դիմած եզակի տնօրենները մեզնից էին խնդրում համապատասխան փաստաթղթերը՝ դիմումի և պայմանագրի օրինակելի ձևերը: Այս իրավիճակը նկատելի էր, թե Երևանի և թե մարզերի դպրոցներում: Բացի այդ ուսուցիչների գերակշիռ մեծամասնությունը չգիտեր վերապատրաստման չափորոշչի և օրինակելի ծրագրի բովանդակության մասին գրեթե ոչինչ: Ստացանք դժգոհություններ դպրոցի տնօրենների կողմից, համաձայն որի իրենք չեն կարող հիմա կնքել պայմանագիր, քանի որ ԿԳՄՍ նախարարության կողմից համապատասխան ֆինանսավորում դեռևս չեն ստացել: Ստացվում է՝ ԿԳՄՍ նախարարությունը, ըստ իր իսկ կողմից մշակված ընթացակարգերի, առաջարկում է կազմակերպություններին սկսել վերապատրաստումների դասընթացները, սակայն այդ դասընթացները կազմակերպելու համար անհրաժեշտ ֆինանսավորման տրամադրման ժամկետների հարցը թողնում է անորոշ: Այստեղ շահում են մեծ բյուջեներ ունեցող կազմակերպությունները, և կրկին խաթարվում է աշխատանքային հավասար պայմանները:

Եթե ԿԳՄՍ նախարարությունը իրականում ցանկանում է, որ ոլորտում բարեփոխումներ տեղի ունենան, ապա վերոնշյալ բացթողումները, թերությունները անհրաժեշտ է շտկել, այլապես ուսուցիչների ատեստավորման այս նոր համակարգը իր էությամբ նախորդներից չի տարբերվի:

Ի դեպ նշենք, որ վերոնշյալ նկատառումներով նամակը ուղարկել էինք ԿԳՄՍ նախարար պարոն Դումանյանին դեռևս 2021թ. օգոստոսի 30-ին, սակայն արձագանք կամ որևէ գործողություն, որը կփոխեր ստեղծված իրավիճակը, այդպես էլ չենք ստացել:

Մեկ այլ հարցում - նամակ էլ դեռևս 2021թ. օգոստոսի 5-ին ուղարկել էինք ԿԳՄՍ նախարարի տեղակալ տիկին Անդրեասյանին, որի պատասխանը ստացանք սեպտեմբերի 27-ին, որտեղ մեր կողմից բարձրացված հարցերի պատասխան-լուծումներ չկային, պարզապես որոշ տեխնիկական ոչ փոխկապակցված տվյալներ:

Խնդիրների մասին փորձեցինք բարձրաձայնել նաև ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի նիստում (2021թ. սեպտեմբերի 30-ին), որին կտրականապես դեմ հանդես եկավ ԿԳՄՍ նախարարի տեղակալ տիկին Անդրեասյանը՝ պատճառաբանելով, որ հարցը օրակարգում ընդգրկված չէ հետևաբար քննարկման ենթակա չէ: Այդ նիստից հետո բազմիցս փորձեցինք օրակարգ մտցնել հարցը, սակայն ապարդյուն:

Կրթության զարգացման եվ նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ) հիմնադրամի տնօրեն Արտաշես Թորոսյանը ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված վերապատրաստող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ առցանց հանդիպման ժամանակ (2021թ. նոյեմբերի 19-ին) նշեց, որ նախատեսվում է յուրաքանչյուր կազմակերպության հետ քննարկում առաջացած հարցերի վերաբերյալ, սակայն այդ քննարկումն այդպես էլ չկազմակերպվեց:

Մեկ այլ խնդիր է ԿԳՄՍ նախարարության կողմից, այս հարցում, որոշումների կայացման թափանցիկության բացակայությունը: Ըստ ԿԳՄՍ նախարարի N 24-Ն հրամանի, պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կամակերպությունների և կազմակերպությունների երաշխավորված դասընթացների ընտրությունն իրականացնում և ուսուցիչների վերապատրաստման ոլորտում դրանց գործունեությունը 3 տարով երաշխավորում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Վերապատրաստում իրականացնող երաշխավորված կազմակերպություն ճանաչելու կամ Դասընթացը երաշխավորելու նպատակով մինչև մրցույթի հայտարարությունը, ԿԳՄՍ նախարարի հրամանով ստեղծվում է հայտերի գնահատման հանձնաժողով, որը հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո երկշաբաթյա ժամկետում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և գնահատում համաձայն N 24-Ն հրամանում առկա ընթացակարգի: Սակայն ԿԳՄՍ նախարարությունը, բացի նախատեսված մրցույթից (որի համար համապատասխան կազմակերպություններին ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորվելու համար անհրաժեշտ էր դիմել 2021թ. ապրիլի 5-ից մինչև ապրիլի 19-ը ներառյալ՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը) տարվա ընթացքում մի շարք

կազմակերպություններին տվել է երաշխավորում, ինչպես նաև դասընթացներին՝ համապատասխան կրեդիտավորում: Այստեղ հարց է առաջանում, արդյո՞ք նախարարությունը պահպանել է վերոնշյալ հրամանով հաստատված ընթացակարգերը և մրցույթից դուրս յուրաքանչյուր կազմակերպության դիմումը ուսումնասիրելիս ստեղծել է հայտերի գնահատման հանձնաժողով, թե՞ որոշումները նախարարը կայացրել է միանձնյա և արդյո՞ք դա չի հակասում հենց ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված ընթացակարգերին:

Այստեղ նաև մեկ այլ խնդիր է առաջացել, քանի որ ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված կազմակերպությունները սահմանափակում չունեն իրենց կազմակերպած դասընթացների համար գումարի չափ սահմանել (ըստ մեր դիտարկումների, 110 ժամ տևողությամբ դասընթացների արժեքը որոշ կազմակերպությունների կողմից հասել է մինչև 60.000 դրամ), իսկ ԿԳՄՍ նախարարության կողմից ուսուցչին, վերոնշյալ ժամաքանակի համար, հերթական (պարտադիր) ատեսավորման ժամանակ կարող է փոխհատուցվել մինչև 24.000 դրամ, այն էլ դպրոցի ադմինիստրացիայի կողմից իրականացվելիք բազմաթիվ փաստաթղթային գործողություններից հետո, արդյո՞ք արդար է ստեղծված իրավիճակը և նման մոտեցումը՝ առանց այդ էլ խիստ ցածր վարձատրվող ուսուցչի նկատմամբ: Արդարության համար պետք է նշել, որ երաշխավորված կազմակերպությունների կողմից իրապես որակյալ, արդյունավետ դասընթացներ կազմակերպելու, բարձր որակավորում ունեցող մասնագետներ ներգրավելու համար անհրաժեշտ է համապատասխան ֆիանանսավորում, որը ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված մինչև 24.000 դրամը, մեղմ ասած, չի բավարարում:

Պարտադիր ատեստավորման այս նոր համակարգի գործարկումը սկսվեց 2021 թվականի օգոստոսից: Դեռևս 2019 թ-ից պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչները մինչև 2021թ. նոյեմբերի 30-ը անցան անհրաժեշտ վերապատրաստումները, որի հիման վրա էլ ստացան սահմանված կրեդիտները և ատեստավորվեցին, սակայն այդպես էլ պարզ չդարձավ, թե ինչպես ԿԳՄՍ նախարարությունը ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ միասին իրականացրեցին այդ վերապատրաստումների որակի վերահսկողությունը, ինչ մեխանիզմներով չափվեցին անցած տարվա վերապատրաստումների արդյունավետությունը:

Հ.Գ.

Պարտադիր ատեստավորման շրջանակում վերապատրաստումներ իրականացնող կազմակերպությունների աշխատանքի որակը վերահսկող

կազմակերպությունը, որը լիազորված է ԿԳՄՍ նախարարության կողմից, ԿԶՆԱԿ հիմնադրամն է: Վերջինս նույնպես իրականացնում է վերապատրաստումներ ուսուցիչների պարտադիր ատեստավորման շրջանակում, սակայն այդ մասին տեղեկատվություն չկա, ո՛չ ԿԳՄՍ նախարարի 2021թ. մայիսի 18-ի N 780-Ա/2 հրամանում, ո՛չ էլ 2021թ. հունիսի 4-ի N 894-Ա/2 (N 780-Ա/2 հրամանում) փոփոխություն կատարելու մասին հրամանում: Մի՞թե օրինական և էթիկայի տեսանկյունից ճիշտ է վերահսկում իրականացնող լիազոր մարմնի կողմից վերապատրաստումներ իրականացնելը: Ի դեպ այն ժամանակ, երբ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված 48 կազմակերպությունները դեռևս չէին ստացել պատշաճ տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ ԿԳՄՍ նախարարությունից, որպեսզի կարողանային սկսել դասընթացների կազմակերպչական աշխատանքները, ԿԶՆԱԿ-ը, ունենալով համապատասխան տեղեկույթը, արդեն իրականացնում էր դասընթացները:

«Համագործակցային կրթական ծրագրեր» հկ
Երևան 22.03 2022